



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով** «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

**հաշվի առնելով** ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.08.2021թ. թիվ 150-Լ որոշմամբ՝ «ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով 2021 թվականի սեպտեմբերի 12-ին հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրված լինելու հանգամանքը,

**նկատի ունենալով** ՀՀ փաստաբանների պալատի 12.09.2021թ. հերթական ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը սահմանելու անհրաժեշտությունը,

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

**- Հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2021 թվականի սեպտեմբերի 12-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

05 օգոստոսի 2021թ.

թիվ 159-Լ

ք. Երևան